

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի շախմատի պատանիների առաջնության

Երևանյան ընտրական փուլ

Ժամկետները՝ 02-10 մարտի 2022թ., խաղերի ժամանակացույց

Ժամակարգը՝ 90-ական բոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից:

Անցկացման վայրը՝ Հայաստանի շախմատի ակադեմիա/հասցե՝ ք. Երևան Ծևչենո 34/:

Առաջնությունն անցկացվելու է 5 առանձին խմբերով:

Մուտքավճարը՝ 3000 ՀՀ դրամ

Ժամանակացույց.

Ամսաթիվ	Խաղափուլ	Ժամ
02 մարտի	1-ին տուր	15:30
03 մարտի	2-րդ տուր	15:30
04 մարտի	3-րդ տուր	15:30
05 մարտի	4-րդ տուր	12:00
06 մարտի	5-րդ տուր	12:00
07 մարտի	6-րդ տուր	15:30
08 մարտի	7-րդ տուր	15:30
09 մարտի	8-րդ տուր	15:30
10 մարտի	9-րդ տուր	15:30

Մինչև 8 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 4-րդ մարզական կարգի 1 բալ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2013թ. դեկտեմբերի 31-ից հետո:

2-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլից:

1-ից 10-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2022թ. մինչև 8 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 10 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 3-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2011թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ին մարզական կարգ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլից:

1-ից 25-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2022թ. մինչև 10 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 1-ին կարգի 1 բալ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2009թ. դեկտեմբերի 31-ից հետո, իսկ 2010թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածները՝ 2-րդ մարզական կարգ:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2022թ. մինչև 12 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 14 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 1-ին կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2007թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 18-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2022թ. մինչև 14 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 16 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 1-ին կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2005թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 14-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2022թ. մինչև 16 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Ընտրական բոլոր մրցաշարերում **արգելվում է** այն շախմատիստների մասնակցությունը, ովքեր որևէ տարիքային խմբում Հայաստանի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության անհատական իրավունք ունեն:

Հայաստանի պատանիների առաջնության երևանյան ընտրական փուլի մասնակիցների հայտերը Հայաստանի շախմատի ակադեմիա պետք է ներկայացնեն մինչև 2022 թ. փետրվարի 23-ը / հայտերի ընդունման վերջնաժամկետն է/:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 043 44 84 73 հեռախոսահամարով:

Մարզադպրոցները հայտերը լրացված պետք է ուղարկել **chessacademyarm@gmail.com** էլ. հասցեին մինչև **փետրվարի 23-ը**:

Մուտքավճարները պետք է փոխանցել Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հաշվեհամարին՝

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ 1570018417800100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարի անունը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, տարիքային խումբը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար: